Ð ³ Û ³ ë ï  ³ ÝÇ Ð ³ Ýñ ³  å » ï áõÃÛáõÝ
¶Ç ï áõÃÛáõÝÝ»ñÇ  ² ½ · ³ ÛÇÝ  ² Ï ³  ¹ »ÙÇ ³
**üÆ½Æ Î  ²  Î  ² Ü  Ð º  î  ² ¼à î àôÂÚàôÜÜ º ðÆ**
**ÆÜê îÆ î àô î**
ä » ï  ³  Ï  ³  Ý   àã  ² é¨  ï ñ ³ ÛÇÝ  Î  ³ ½Ù ³  Ï »ñ å áõÃÛáõÝ

Republic of Armenia
National Academy of Sciences
**INSTITUTE**
**FOR PHYSICAL RESEARCH**
Non – Profit State Organization

Ք. Աշտարակ , Աշտարակ-2 0203
Հեռ. 374-10-288150; ֆաքս: 374 23231172

Postal address: 0203, Ashtarak-2, Armenia; Tel.: 374-10-288150; Fax: 374 23231172; E-mail: ifi@ipr.sci,am

“5” փետրվար 2015 թ.   N……………………

*ՖՀԻ - ՇՀԱՊՁԲ-11/1-15/1* ծածկագրով մրցույթի շրջանակներում ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի 2015 թվականի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ – 11/1-» ծածկագրով մրցույթի շրջանակներում կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն, ք. Աշտարակ-2 0203, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ, մինչև 2015թ. Փետրվարի 17-ը, ժամը 14:00-ն:

Հայտերը կբացվեն Աշտարակ-2 0203, ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում 2015թ. Փետրվարի 17-ին, ժամը 14:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել N ԳԱԿ - ՇՀԱՊՁԲ – 11/1- ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Հարգանքով`

Ա. Պապոյան

Կատարող` Վ. Բալասանյան
Հեռ. 28-81-50

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

*ՎԱՌԵԼԻՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՖՀԻ -ՇՀԱՊՁԲ-11/1-15/1*

ք. Աշտարակ __ ___________ 2015 թ.

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների ինստիտուտը, ի դեմս տնօրեն Ա. Պապոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «................... ¦, ի դեմս Ընկերության տնօրեն .................................. (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված վառելիք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ---- օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է`**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի`**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո` ողջամիտ ժամկետում, այլ անձի` Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք` համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է`**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան` Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան` Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք` Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող` ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան` պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է` _________________ (_______________________________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1* Պայմանագրի գնից`----------- (-------------------------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին` որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` Պայմանագրի վճարման ժամանակացույցով` հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով` վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20    թ. դեկտեմբերի 25-ը:

*<u>* Կիրառվում է, եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար:</u>*

**5. Ապրանքի որակը**

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/` Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը` Ապրանքի հանձնման ավարտից ___ աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության ----- .օրինակ /Հավելված N 4/:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից ____օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված` մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ` մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

****** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա`

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ`

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

**9.8 Պայմանագիրը կնքվում է ընդհանուր`______ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան Պայմանագրի գինն է` Ապրանքի մատակարարման մնացած մասը կկատարվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում` լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ապրանքի մատակարարման համար տվյալ տարվան հաջորդող տարում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով Պայմանագիրը կլուծվի:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

*<u>**Սույն կետը կարող է նախատեսվել պայմանագրի նախագծով, եթե կիրառելի է:</u>*

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների ինստիտուտ ՊՈԱԿ | «----------» ---Ը |
| Ք. Աշտարակ-2, 0203. | Հասցե --------------------------- |
| Աշտարակի մ/ճ " **Հայէկոնոմբանկ**" | «----------բանկ» --Ը |
| Հ/Հ 163208130104 | Հ/Հ --------------------------------- |
| ՀՎՀՀ05001145 | ՀՎՀՀ -------- |

**Տնօրեն** **Տնօրեն**

---------------------------- Ա. Պապոյան ----------------------------

(ստորագրություն) (ստորագրություն)

Կ.Տ Կ.Տ

**Հավելված 1**
«-----» «---------» 2015թ.կնքված
*№ ՖՀԻ -ՇՀԱՊՁԲ-11/1-15/1* գնման պայմանագրի

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն   Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

| *Չափաբաժինների համարները* | *Ապրանքի անվանումը* | *Չափի միավորը* | *Տեխնիկական բնութագիրը* |
|---|---|---|---|
| 1 | Բենզին պրեմիում | լիտր | Արտաքին տեսքը` մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով` ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով` ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը` 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը` 15 °C ջերմաստիճանում` 720-775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի` մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված “Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի” |
| 2 | Դիզելային վառելիք | լիտր | Ցետանային թիվը 51-ից ոչ պակաս, ցետանային ցուցիչը-46-ից ոչ պակաս, խտությունը 150C ջերմաստիճանում 820-ից մինչև 845 կգ/մ3, ծծմբի պարունակությունը 350 մգ/կգ-ից ոչ ավելի, բռնկման ջերմաստիճանը 550C-ից ոչ ցածր, ածխածնի մնացորդը 10% նստվածքում 0,3%-ից ոչ ավելի, մածուցիկոիթյունը 400C-ում` 2,0-ից մինչև 4,5 մմ2/վ, պղտորման ջերմաստիճանը` 00C-ից ոչ բարձր, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» |

***Մատակարման կետը , և կտրոն հաշիվ ապրանքագրերը տրամադրվում են Մատակարարի կողմից Պատվիրատուի հասցեից ոչ ավել քան 5 կմ. հեռավորության վրա.**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների ինստիտուտ
Ք. Աշտարակ-2, 0203.
Աշտարակի մ/ճ " **Հայէկոնոմբանկ**"
*Հ/Հ* 163208130104
*ՀՎՀՀ* 05001145

**Տնօրեն**

----------------------------- Ա. Պապոյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«----------» ---Ը
Հասցե ----------------------------
«----------բանկ» --Ը
*Հ/Հ* ---------------------------------
*ՀՎՀՀ* --------

**Տնօրեն**

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Հավելված 2**

«-----» «---------» 2015թ.կնքված

*№ ՖՀԻ -ՇՀԱՊՁԲ-11/1-15/1* գնման պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժիններ | Գնման ենթակա ապրանքի անվանումըի | | | Նախատեսվում է գնել 2015թ, ընդ որում | | | | Ընդամենը՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | |
| | Անվանումը | Չափի միավորը | Միավորի գինը | | | | | Քանակը |
| 1 | Բենզին պրեմիում | լիտր | | 1375 | 1375 | 1375 | 1375 | **5500** |
| *2* | Դիզելային վառելիք | լիտր | | 450 | 450 | 450 | 450 | **1800** |
| | Ընդամենը՝ | | | | | | | |

* Կախված ներկայացված գներից ՝ քանակները կարող են փոփոխվել:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների
ինստիտուտ
Ք. Աշտարակ-2, 0203.
Աշտարակի մ/ճ " **Հայէկոնոմբանկ**"
*Հ/Հ* 163208130104
*ՀՎՀՀ* 05001145
**Տնօրեն**

-------------------------------- Ա. Պապոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«----------» ---Ը
Հասցե ---------------------------
«----------բանկ» --Ը
*Հ/Հ* ---------------------------------
*ՀՎՀՀ* --------
**Տնօրեն**

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Հավելված 3**
«-----» «---------» 2015թ.կնքված
*№ ՖՀԻ -ՇՀԱՊՁԲ-11/1*-15/1 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ դրամ**

| հ/հ | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2014թ.-ի պետական բյուջեից և ա/բ միջոցներից, ընդ որում` | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3- րդ եռամսյակ | 4- րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1. | Բենզին պրեմիում | 25% | 50% | 75% | 100% | 100% |
| 2. | Դիզելային վառելիք | 25% | 50% | 75% | 100% | 100% |
| | Ընդամենը | | | | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների
ինստիտուտ ՊՈԱԿ
Ք. Աշտարակ-2, 0203.
Աշտարակի մ/ճ " **Հայէկոնոմբանկ**"
*Հ/Հ* 163208130104
*ՀՎՀՀ* 05001145

**Տնօրեն**

-------------------------------- Ա. Պապոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«----------» ---Ը
Հասցե ---------------------------
«----------բանկ» --Ը
*Հ/Հ* ---------------------------------
*ՀՎՀՀ* --------

**Տնօրեն**

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Հավելված 4**
«-----» «---------» 2015թ.կնքված
*№ ՖՀԻ -ՇՀԱՊՁԲ-11/1-15/1* գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների ինստիտուտ
Ք. Աշտարակ-2, 0203.
Աշտարակի մ/ճ '' **Հայէկոնոմբանկ**''
Հ/Հ 163208130104
ՀՎՀՀ 05001145

ՎԱՃԱՌՈՂ

«----------» ---Ը
Հասցե ---------------------------
«----------բանկ» --Ը
Հ/Հ ---------------------------------
ՀՎՀՀ --------

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____**

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

«-----» ------------------------- 2015թ.
Պայմանագրի անվանումը՝ « վառելիքի գնման» պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը «-------» «-------» 2015թ.
Պայմանագրի համարը՝ *№ ՖՀԻ- ՇՀԱՊՁԲ-11/1-15/1*

Պատվիրատուն, ի դեմս ԳԱԱ Ֆիզիկական Հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Ա. Պապոյան և վաճառող՝ ի դեմս «----------» --Ը-ի տնօրեն ---------------------ի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «-----» ---------------------- 2015թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N___ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում վաճառողը «-----» -------------------- 2015թ.-ից «-----» --------------------- 2015թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ Աշխատանքները.

| Մատակարարման համառոտ նկարագիրը | մատակարարման քանակական ցուցանիշները | Մատակարարումների ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| Բենզին պրեմիում | | | | |
| Դիզելային վառելիք | | | | |
| Ընդամենը | ------------- | ---------- | | ---------- |

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ.Տ

Աշխատանքն ընդունեց
______________________________
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ.Տ